


2946

Q(4Y)  
Y-20

1937



Ն. ԶԱԳՈՎ.

ՂՐԻՄԻ ՊԱՏԵՐԱԶՄԸ  
1853-1856 թ. թ.



ՀԱՅԱՍՏԱՆԻ Ազգային Գրադարան 1937

30 MAY 2011  
27 JAN 2006

ՀԽՍՀ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ԻՆՍԻՏՈՒՏ

№ 2 ՀԵՇԱԿԱ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ - № 2

9(47)70

4-20

Ա. Վ. Խ.

Ն. ՅԱՊՈՎ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՀԱՅԱՀԱՆՐԱԴՐԱՄԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՀԱՅԱՀԱՆՐԱԴՐԱՄԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՂՐԻՄԻ ՊԱՏԵՐԱԶՄԸ  
1853-1856 թ. թ.

(Ոժանդակ հյուրեն՝ նեռակալողներին)

ՅԵՐԵՎԱՆ

ԳԻՏՀԱՆՑԻ ՏՊԱՐԱՆ

1937

26.08.2013

Պատ. խմբագիր՝ Հ. ԽՈՒՇՈՅԱՆ  
Թարգմ.՝ Մ. ԶԱԲԱՐՅԱՆ  
Խրագրիչ՝ Ս. ՇԱԼՋՅԱՆ

Գլուխացի սպառան  
Գլուխիս № 2243  
Պատվեր № 27  
Տիրած 1000



## ՂՐԻՄԻ ՊԱՏԵՐԱԶՄԸ

1853—1856 թ. թ.

1

Ղրիմի 1853—1856 թթ. պատերազմը մի կողմից Ռուսաստանի և մյուս կողմից՝ Անդլիայի, Ֆրանսիայի, Թյուրքիայի ու Սարդինիայի միջև, հսկայական նշանակություն ունեցավ վոչ միայն Ռուսաստանի, այլև Արևմտյան Յեղուսպայի համար:

Մինչև Ղրիմի պատերազմը Ռուսաստանի միջազգային դրությունն այլ եր, քան հետագա տարիներին, առանձնապես ինպերիակազմի ժամանակաշրջանում. XIX դարի առաջին կեսում, մինչև արևելյան պատերազմը, ուստական ցարիզմը վնչ միայն կախման մեջ չեր արևմտայելլրոպական կազիտալիստներից, այլև հավակնություն ուներ վճռական դեր խաղալու Յեղուսպայում և վարելու միանգամայն անկախ արտաքին քաղաքականություն:

Յեղուսպայում ցամաքային մեծագույն բանակի վրա հենված ուստական ինքնակալությունը կալվածատերերի ու աճած բուրժուազիայի հետ միասին վճռական աննեկտոնիստական-գաղութաբարեկան քաղաքականություն եր վարում և հանդես եր գալիս միջազգային ժանդարմի, հեղափոխական շարժումները խեղդողի գերում վոչ միայն իր մոտ, այլև ուրիշ յերկրներում:

\* Արևելյան պատերազմում, առանձնապես նրա վճռական փուլում՝ Ղրիմի պատերազմում կրած նրա պարտությունը վերջ դըրեց Ռուսաստանի ուղղմական այս հզորությանն, իբրև ցամաքային առաջնակարգ ուղղմական պետության<sup>1</sup>:

Արևելյան պատերազմը քայլքայից Ռուսաստանի ուժերը,

<sup>1</sup> Նրա հզորությունը փփուն գուրս յեկավ. արևելյան պատերազմի առաջին իսկ տարում յերկաց, վոր Ռուսաստանն, ամենաշատը, կարող է դասվել յերկրորդական ուղղմական պետությունների շարքը, և այն ել մեծ տարակուանքով:

թուլացրեց նրա ուեակցիոն ազգեցությունն յեվրոպական գործերի վրա: Սրանումն եր նրա պրոգրեսիվ նշանակությունը, վոր նշում ելին Մարքսն ու Ենդեւը:

Մարքսիզմի հիմնադիրները մեծ ուշագրություն ելին հատկացնում Ղրիմի պատերազմին: Նրանց վերաբերմունքը դեպի պատերազմը վորոշվում եր յեվրոպական հեղափոխության շահերով: Ոգտագործել անգլո-ֆրանսական կապիտալիստների բաղխումը ճորտատիրական Ռուսաստանի հետ յեվրոպական հեղափոխության ուժերը կապանքներից ազատելու համար, թուլացնել «միջազգային ժանդարմ» Ռուսաստանին,—այս եր Յեվրոպայի հեղափոխականների նպատակը: Ուստի Մարքսի և Ենդեւի համակերպն այս պատերազմում Թյուրքիայի կողմն եր, վորովհետեւ սովորական ցարիզմը յեվրոպական հեղափոխության զլիսավոր թշնամին եր, հականեղափոխական մի ուժ, «վորի գլուխը Պետերբուրգումն եր, իսկ ձեռքերը՝ Յեվրոպայի ամեն մի կարինեառմ»:

Բայց սրա հետ միասին Մարքսն ու Ենդեւն ի հայտ ելին բերում Անգլիայի ու Ֆրանսիայի կառավարությունների ուեակցիոն բնույթը, վորոնք հանդես յեկան իբրև թե «պաշտպանելու» Թյուրքիային, բայց իրականում ձգտում ելին արգելք հանդիսանալ Ռուսաստանի՝ նրանց համար անձեռնոտու չափազանց ուժեղացմանը: Սրա հետ միասին Անգլիան և Ֆրանսիան չելին դիմում և չելին կարող դիմել Ռուսաստանի լիակատար ջախջախմանը, վորը հանդիսանում: Եր զլիսավոր «կարգի հենարանը Յեվրոպայում», մանավանդ այնպիսի մոմենտի, յերբ Յեվրոպայում կրկին հասունանում եր հեղափոխական ալիքը: Անգլիայի և Ֆրանսիայի բուրժուական կառավարություններն, ինարկե, այն ուժը չելին, վորն ի վիճակի լիներ հետևողականորեն կավելու ցարական Ռուսաստանի դեմ: Այս բանը կարող եր անել ցամաքային հեղափոխությունը միայն, վորից ցարիզմը չափազանց վախենում եր:

Ենդեւը գրում եր, վոր ցարական Ռուսաստանը ցամաքային հեղափոխությունից ավելի շատ ե վախենում, քան սուլթանը ցարի հարձակումը: «Այն հեղափոխությունը, վոր կտապալի Արեմը առաջան Հռոմին, կհազթի նմանապես արևելյան Հռոմի գիշային աղդեցությունը»<sup>1</sup>:

Ուստի Ռուսաստանի համարնթաց ամբողջ արտաքին քաղաքականությունը, սկսած Յեկատերինա Ա-ի թագավորության:

յերկրորդ կեսից, մի նպատակ եր հետապնդում՝ խեղգել ֆրանսիայի բուրժուական հեղափոխությունը, վոր կարող եր, ուրիշ յերկրներ տարածվելով, հասնել Ռուսամատանին և գյուղացիական բունափառական ծառայել կալվածատիրական-ճորտատիրական կարգի դեմ:

Հաշվեհարդար կատարելով Յեվրոպայի հեղափոխական ապլատամբությունների հետ, ուստական ցարիզմը բնավ առիթը բաց չեր թողնում իր գավթողական պլաններն իրականացնելու համար, ոգտավելով գրացի յերկրների գժվարին գրությունից:

✓ Նիկոլայան Ռուսաստանի ինչպես ներքին, այնպես ել արտաքին քաղաքականությունը վորոշվում եր կարվածատեր-ճորտատերի ձգտումով՝ պահպանել և ամրացնել իրենց գերիշանությունը, իրենց ձեռքում պահնել հողը և ճնշել գյուղացիական հարածուն շարժումը:

↙ Արեւելյան պատերազմի սկզբին Ռուսաստանում գրությունը շատ լարված եր: Գյուղացիությունը խմորվում եր և տարերայնորեն կովի յելնում ճորտատիրական կեղեքման դեմ: Արդյունաբերական աճող բուրժուազիան զժգոհ եր ճորտատիրական հարաբերություններից, վորոնք կաշկանդում ելին նրա գործունեյությունը, նրան անհրաժեշտ ելին վաճառահանման նոր շուկաների ընդարձակում ելին պահանջում նաև կարվածատերերը գյուղատնտեսության ապրանքայնության աճման հետևանքով: Արդյունաբերական հեղաշրջումը Յեվրոպայում և Ռուսաստանի ներսի արդյունաբերության աճումն ընդարձակում ելին ինչպես ներքին, այնպես ել արտաքին շուկան գյուղատնտեսական միերքների, և առաջին ներթին, ճորտատիրական կալվածքների միերքների համար: Հացահատիկի արտադրության հետ միասին աճում և գյուղատնտեսական հումքի արտադրությունը, աճում և գյուղատնտեսության ապրանքայնությունը և նրա արդյունաբերի արտահանումն արտասահման: Մեռանալու Յեվրոպայից Յեվրոպայի գենում գյուղատնտեսական հումք և հացահատիկի, Ասիա՝ վերամշակող արդյունաբերության արտադրանքներ՝ տեքստիլ, կաշիներ, յերկաթե շինվածքներ և այլն: Ավելի ու ավելի յեն ընդարձակում կալվածատերերի ու արդյունաբերական կապիտալի կապերն արտաքին շուկաների հետ, այսպես, 1851 թ. հացահատիկի արտահանումն կազմում եր 5137 հազ. չետվերտ, 1859 թ.—10600 հազ. չետվերտ:

Վերամշակող արդյունաբերության արտադրանքի, առանձ-

<sup>1</sup> Կ. Մարքս յել Ֆ. Ենդեւ. Յերկերի ժողով, IX հ., եջ 441.

նապես թեթև ինտուստրիայի արտադրանքի համար վաճառահանման գլխավոր շուկաներն եյին առաջավոր Ասիան և Պարսկաստանը: Արտահանումը գեպի այս յերկրները տարեց տարի առում եր. այսպես, 1826—1830 թթ. Կյախտի շուկայում իրացվեց 246700 ռ. արծաթով մահուդ, 1836—1840 թթ. —933900 ռ. արծաթով, 1846—1850 թթ.—2939000 ռ. արծաթով: Ընդամենը ասիական շուկայում իրացված է մահուդ՝ 1820—1821 թթ. 105000 արշին, 1851—1853 թթ.—1429963 արշին. բամբակեղին գործվածք՝ 1820—1821 թթ. իրացված է 30369 արշին, իսկ 1851—1855 թթ. —2615518 արշին:

Ինչպես տեսնում ենք, կալվածատերերի, արդյունաբերական բուրժուազիայի և առևտրական կապիտալի ձգտումները նվաճելու նոր շուկաներ, գաղութներ ու առևտրական ճանապարհներ, շատ իրական տնտեսական հիմք ուներ:

Ենքնակալությունն ընդառաջում եր կալվածատերերի ու բուրժուազիայի այս ձգտումներին, հուսալով արտաքին նվաճումներով ամրացնել կալվածատերերի գերիշխանությունը յերկրի ներսում: Սրանով եր վորոշվում ինքնակալության արտաքին քաղաքականությունը, վոր գենքով ճանապարհ եր բացում ոռուսաց առևտրի ու գաղութարարության համար Արևելքում: XIX դարի առաջին կեսում նվաճում է Կովկասը, վոր հանդիսանում եր հարուստ գաղութ և առևտրական ճանապարհ գեպի Պարսկաստանի շուկաները. նվաճվում և գաղութացվում է միջին Ասիան: 1849 թ. լայնորեն զարգանում է Հեռավոր Արևելքի գաղութացումը և իրնդիր և դրվում զրավելու Պրիամուրիեն (մերձամուրյան շրջան) և Սախալինը:

Կալվածատերերի և առևտրա-արդյունաբերական կապիտալի այս ձգտումների մեջ հատուկ տեղ եր զրավում Կոնստանդնուպոլիսը, վոր մի գուռ եր հարավային Ռուսաստանից գեպի արևմտայելքուական շուկաները հացահատիկ արտահանելու առևտրական գլխավոր ճանապարհին և ռազմագիտական կարևորագույն կետ Սև ծովի, Փոքր Ասիայի, Կովկասի և Բալքանների վրա գերիշխելու համար: Հենց այստեղ ել Ռուսաստանի շահերը բաղկավում եյին անգլիական և ֆրանսիական կապիտալիզմի շահերի հետ:

Նիկոլայ I-ը հույս ուներ Թյուրքիայի դեմ հաղթական պատերազմ մղելով պահպանել ու ամրացնել ցարական Ռուսաստանի վճռական գերը Յեվրոպայում: Նիկոլայ I-ը հույս ուներ այս պատերազմի շնորհիվ բարարարել կալվածատերերի ու առևտրական

կապիտալի ձգտումները, արտաքին նոր շուկաներով փոխհատուցել արդյունաբերական բուրժուազիային, վոր նեղվում եր յերկրի ներսի ձրտափիրական կարգերից, և հաղթանակների փորոտի տակ հարձակվել իր գլխավոր թշնամու՝ գյուղացիական շարժման վրա:

Մակայն այս հույսերին վիճակված չեր իրականանալու: Անգլիայում և Ֆրանսիայում աճած արդյունաբերական կապիտալիզմը յեւանդագին նվաճողական գործունեյություն եր վարում աշխարհի բոլոր կողմերում, ձգտելով նվաճել նոր շուկաներ ու գաղութներ: Յեկ բնական ե, վոր Ռուսաստանն իր աննեկոնիստական-գաղութարար քաղաքականության մեջ բաղխվում եր արևմտայելքուական, գլխավորապես անգլիական կապիտալիստների շահերի հետ: Անգլիական արդյունաբերության առանձնապես շահագույն գաղութական պլանների կենտրոնակետն եր:

Այս պատճառով ել կապիտալիզմի ու բուրժուական հարաբերությունների զարգացման կապակցությամբ փոխվեց Արևմտյան Յեվրոպայի կապիտալիստական առաջավոր յերկրների վերաբերմունքը գեպի Ռուսաստանը: Այս բանը հաշվի չառավ Նիկոլայ I-ը իր ամբարտավան ինքնակալանությամբ, յերբ սկսեց արևելյան պատերազմը: Նա չըմբռնեց արևմտայելքուական պետությունների պատմական եվոլյուցիան, հաշվի չառավ իրեն թշնամի նոր ուժը հանձին այդ պետությունների մեջ առաջացած բուրժուական գեմոկրատական հասարակայնության, վորը ձնշում գործադրեց իրնց կառավարությունների վրա: «Նա չափազանց շատապեց Կոնստանդնուպոլսի գեմ գուրս գալով և առաջացրեց Ղրիմի պատերազմը: Անգլիան և Ֆրանսիան «ոգնության հասան Թյուրքիային», իսկ Ավստրիան վառվում եր «իր ապերախտության մեծությամբ աշխարհ զարմացնելու» ցանկություննով»<sup>1</sup>:

«Ճարի հայացքները» հոգվածում Մարքսը մեջ երեսում Նիկոլայ I-ի զբույցն «ականավոր» անգլիացու հետ, վորի ժամանակ ցարը հայտարարել ե, թե «...նա պատրաստ չեր պատերազ-

<sup>1</sup> Ֆ. Ենիքելս, «Ռուսական թագավորության ռտարերկրյա քաղաքական նությունը»:

մելու—չե՞ վոր նա միանգաման համոզված եր, վոր պարզ սպառ-  
նալիքներով ամեն ցանկալի բանի նա կհասնի»<sup>1</sup>:

Նա հույսը դրել եր Արևմուտքի պետական մարդկանց յերկ-  
չոտության վրա, բայց հաշվի չառավ հեղափոխական դեմոկրա-  
տիայի դերը, վորն ստիպում եր նրանց ավելի խիզախ լինելու:  
Նա հույս ուներ, վոր Թյուրքիան ընդունակ չե զիմադրություն  
ցույց տալու իրեն, իսկ իրականում Թյուրքիան շատ շուտով  
ստիպեց ոռուսներին Դանուբի վրա անցնելու պաշտպանության:  
Նա հույս ուներ Ավստրիայի բարեկամական չեզոքության վրա,  
իսկ Ավստրիան թշնամական վիճակած չեզոքության դիրք բռնեց  
և պաշտպանեց դաշնակիցներին:

Նույնիսկ Պրուսիան, վոր ամենից ավելի կայուն կերպով ջա-  
նում եր չեզոքություն պահպանել, ստիպված եր բուրժուական հա-  
սարակայնության և գաշնակիցների ճնշման տակ քաղաքականու-  
թյուն վարել ի վես Ռուսաստանի: Նիկոլայ Ա-ն առանձնապես  
հույս ուներ Անդիմայի թողարկության վրա: Մինչեռ Անդիման  
գտնվեց Ռուսաստանի հակառակորդների բանակում:

Նիկոլայ Ա-ը գերագնահատեց նաև Ռուսաստանի ռազմական  
զորությունը: Իրականում կապիտալիստական առաջավոր յերկը-  
ներին նա կարողացավ հակադրել միայն մի հետամիաց բանակ,  
վորն այնպես եր կառուցված, մատակարարված և այնպես եր  
դեկավարվում, վոր միայն ջախջախվել կարող եր:

2

✓ 1853—1856 թթ. «Արևմյան պատերազմը» (այսպես ելին  
նրան անվանում անգլո-ֆրանսիացիք) տեղի ունեցավ յերեք  
ռազմաբեմում՝ Դանուբի, Դրիմի և Կովկասի:

1853 թ. հուլիսի 2-ին ռուսական զորքերը Թյուրքիայի  
հպատակ ուղղափառ քրիստոնյաներին պաշտպանելու պատրիա-  
կով անցնում են Պրուս գետը և սկսում ոկուպացիայի յենթար-  
կել Թյուրքիայի պրոտեկտորատի տակ գտնվող դանուբյան իշ-  
խանությունները: Նրանք արագորեն զրավում են Մոլդավիան  
ու Վալախիան և անարգել դուրս գալիս Դանուբի գծի վրա:

Թյուրքիայի և գաշնակիցների անվճականությունը ռուս-  
ների համար ցյուրացրեց այս գործողությունը: Թյուրքիան պա-  
տերազմ հայտարարեց Ռուսաստանին միայն հոկտեմբերի 10-ին,

այսինքն գանուբյան իշխանությունների ոկուպացիան սկսվելուց  
ավելի քան յերեք ամիս հետո, իսկ Անգլիան և Ֆրանսիան պա-  
տերազմի մեջ մտան միայն 1854 թվի մարտի 28-ին:

Ռուսաստանը Դանուբի ուղղմարեմում ուներ լնդամենը 80  
հազար զորք 196 հրանոթով, ընդվորում այս զորքից մինչեւ 25  
հազար հոգի կենտրոնացված եր Դանուբի գետաբերանում:

— Թյուրքերը Դանուբի աջ ափին, Բուլղարիայում և Դոբրու-  
ջեյում ունելին 130 հազար զորք, ընդվորում նրանք ավելի լավ  
եին զինված, քան ռուսները: Իրեւ հենարաններ նրանք մի շարք  
ամրոցներ ունելին. Ռումինիա, Ռուշչուլի, Սիլիստրիան և Վան-  
նան: Այս ամրոցներից գոյացած քառանկյունին անմատչելի յեր  
փոքրաթիվ և վատ զինված ռուսական բանակի համար: Այս  
պատճառով ռուսները չելին կարող հարձակողական պատերազմ վա-  
րել և ստիպված ելին պաշտպանողական տակտիկա գործադրելու:

Հոկտեմբերի 28-ին թյուրքերն սկսում են ակտիվ գործո-  
ղությունները: Նրանք անցնում են Դանուբը և նոյեմբերի 2-ին  
զրավում Կարաֆատան ու Ուտենիցան և ամբայնում: Այս կետերը  
զրավելու ռուսական փողձերն անհաջողությամբ են վերջանում:  
Ուտենիցայի մոտ ռուսները լուրջ պարտություն կրեցին, կորցը-  
նելով մոտ 2 հազար մարդ:

Վորոշ ժամանակ անց, ճանապահների վերահաս խափան-  
ման հետևանքով թյուրքերն առանց ռուսների վորսե ճնշման  
հաճանջեցին Դանուբից այն կողմ նրանք չանցան, քանի վոր այս ամրոցը  
չկարողացան վերցնել: Սիլիստրիայի հանաջող պաշտրումը և ռու-  
սաց նավատօրմի հաղթանակը Սինոպի մոտ ռազմական և ա-  
ռանձնապես քաղաքական մեծ նշանակություն ունեցան:

1854 թ. հունվարի 6-ին ռուսները կրկին պարտություն-  
կրեցին Զեթարի կովում:

✓ (Մարտի 23-25-ին ռուսները փորձեցին հարձակվել Բրախ-  
լովի, Գալացի և Իզմայլի մոտ անցնելով Դանուբը, բայց Սի-  
լիստրիայից այն կողմ նրանք չանցան, քանի վոր այս ամրոցը  
չկարողացան վերցնել: Սիլիստրիայի հանաջող պաշտրումը և ռու-  
սաց նավատօրմի հաղթանակը Սինոպի մոտ ռազմական և ա-  
ռանձնապես քաղաքական մեծ նշանակություն ունեցան:

✓ 1853 թ. նոյեմբերի 30-ին ռուսական նավախումբը ծովա-  
կալ Նախիմովի հրամանատարությամբ Սինոպի ծովախորշում  
ջախջախեց թյուրքական նավատօրմը: Այս հարված եր վոչ միայն  
Թյուրքիային, այլև Անգլիային ու Ֆրանսիային, վորսնք պար-  
տավորվել ելին «պաշտպանել կոնստանտինոպոլիսը, կամ Թյուր-

<sup>1</sup> Ա. Մարք յել Ֆ. Ենիկելս. Յերկերի ժող, IX հ., էջ 617:

քիայի՝ հարձակման յենթակա վորևե վայր, ինչպես Յեվոսկա-  
յում, այնպես ել Ասիայում»<sup>1</sup>:

Սինոպի հաղթանակը սուսաներին մեծ սոսավելություններ  
տվեց թյուրքերի հանդեպ. սուսական նավատորմը գերիշխող  
դարձավ Սև ծովում: Բայց սազմական այս ոգուտները դրկվում  
էին իրենց գործնական խմասից քաղաքական այն հիտևանք-  
ների պատճառով, վորոնց հանգավ Սինոպի հաղթանակը: Նա ա-  
րագացրեց Ֆրանսիայի ու Անգլիայի սազմական համաձայնու-  
նության ձևակերպումը և նրանց յերույթը Ռուսաստանի դեմ:  
Նոյեմբերի 30-ին սուսաց նավատորմը հաղթանակ տարափ, իսկ  
գեկտեմբերի 3-ին դաշնակից նավատորմը մտավ Սև ծով—և քիչ  
առաջվա հաղթանակողն անողնական և դառնում հակասակորդի  
ծովային գերազանց ուժերի հանդեպ:

Ուստաց բանակի հարվածը Սիլիստրիային սորատեգիսկական  
տեսակետից ճիշտ եր նախատեսված, վորովհետեւ Դորբուջեյին և  
Սիլիստրիային արբապետելլ գերիշխանություն եր տալիս Դաւ-  
նութի նկատմամբ: Բայց սրա կատարման ժամանակ, Սիլիստրիան  
պաշարելիս սուսական հրամանատարությունը մի շաբք ամենա-  
կոպիս սխալներ գործեց, վորոնք բանակի համար մեծ գոհեր  
արժեցան:

Սիլիստրիայի նշանակությունն ըմբռնում եր նաև Ալլսու-  
րիան: Ուստի պատճական չե, վոր պաշարման յեռուն ժա-  
մանակ ավստրիական կառավարությունը պահանջ և առաջա-  
գրում Ռուսաստանին անմիջապես դատարկելու դանուբյան իշխա-  
նությունները: Անհաջող, ձգձգված պաշարումն ու Ավստրիայի  
ճնշումը հարկադրեցին Ռուսաստանին դադարեցնելու Սիլիստրիա-  
յի պաշարումը:

Սիլիստրիայի բախտը վճռեց գանուբյան ամբողջ կամպա-  
նիայի բախտը. սուսաները, նահանջելով նրանից, կորցրին այն  
ամբողջ մարզը, վոր նրանք նվաճել եյին պատերազմի ոկրքից:  
Հունիսի 22-ին նրանք դադարեցնում են Սիլիստրիայի պաշա-  
րումը, իսկ հուլիսի 26-ին արդեն սկսում են դատարկել դանու-  
բյան իշխանությունները:

Դանուբյան կտականիայում սուսական արեվելյան քաղա-  
քականությունը պարտություն կրեց: Կոնստանդնուպոլիսի գրավ-  
ման մասին մտածել անդամ հարկ չկար: 1854 թ. պլանը, վոր

<sup>1</sup> Քաղվում ե ըստ Բոդրանովիչ՝ «1853-1856 թթ. Արևելյան պատերազ-  
մը» գրքի, էջ 141:

Նիկոլայ 1-ը նշել եր այն ժամանակ, յերբ արդեն բացահայտո-  
րեն խորտակի եյին Կոնստանդնուպոլիսի, Սիլիստրիայի իսկ  
«թերեւ Ռուսչուկի» գրավման հույսերը, նույնպես չիրականացավ:

Դանուրյան կամպանիան ցույց տվեց, վոր սուսական գեն-  
քի անպարտության համբավը փքուն եւ հիմք չունի: Պատե-  
րազմին չափապատճառապահ մինելլ բանակի վատ կազմակեր-  
պումը, բարձր հրամանատարության ամենակոպիս սխալները,  
զինման և վարժության հետամնացությունը, հաղորդակցության  
վատ ձանապարհները ցույց տվին Ռուսաստանի անընդունակու-  
թյունը հաղթելու նույնիսկ թյուրքերին:

Այս բոլորը նպատակցին Անգլիայի և Ֆրանսիայի վորոշմա-  
նը բացահայտում է հանդեռ գալու Ռուսաստանի դեմ: Փուլ յե-  
կան այն հույսերն Ավստրիայի ու Գրուսիայի վերաբերմաք,  
վոր նրանք վոչ միայն աջակցություն ցույց կտան, այլ գոնե-  
չեղոքություն կպահպանեն: Ռուսաստանը մենակ հանդես յեկավ  
ամբողջ Յեղոպայի գեմ: Բոլոր խոշոր պետությունները պատե-  
րազմում եյին նրա գեմ կամ թշնամական չեղոքություն պահ-  
պանում: Բալկանյան ժողովուրդները նույնպես չեյին աջակցում  
ուսւս «աղասարարներին»: Կոնստանդնուպոլիսի գրավման փոխա-  
րեն ստիպված յեղան թշնամուց պաշտպանվելու ամբողջ տերըի-  
տորիայում: Պատերազմական գործողությունները փոխադրվում  
են Ղրիմ:

\* \*

Ղրիմի ուսպմաբեմը հիմնականն եր 1853—1856 թվերի արե-  
վելյան պատերազմում: Դաշնակիցները նշում են գլխավոր հար-  
վածը հասցնել Սևվաստոպոլիսին, վոր ծովային ամրոց եր և ռազ-  
մական նավահանգիստ, Սևծովյան նավատորմի կայան և բա-  
զա, Ռուսաստանի հենակեալ Սև ծովում Թյուրքիայի բաժան-  
ման համար կովկելիս: Սևվաստոպոլը գրավելու գեպքում դաշնա-  
կիցները խախտում եյին Ռուսաստանի գերիշխանությունը Սև  
ծովում և նրա ազգեցությունը Թյուրքիայում ու Բալկաններում:

Անգլո-Գրանսիական նավախմբերը ցույցեր են կատարում  
ամբողջ սահմանի վրա, վորպեսզի ապակենտրոնացնեն սուսաների  
ուժերը և հնարավորության չափ նրանց ուշագրությունը գրա-  
վեն յենթագրյալ ափհանման վայրից: Այս նպատակին նրանք  
հասան, և 1854 թ. սեպտեմբերի 14—17-ին Ղրիմի հարավային  
ափին, Յեղոպատրիայում համարյա անարգել ափ ե հանգում  
վաթսուն հազարանոց բանակ:

Սեպտեմբերի 19-ին սկսվում է հարձակում Սևաստոպոլի վրա:

Թուսաց հրամանատարությունը փորոշում է կոիլ տալ դաշնակիցներին Ալմա գետի վրա, վոր գտնվում է Յեղատորիայից Սևաստոպոլ տանող ճանապարհին: Վաղորոք լավ դիրք եր ընտրված գետի ձախ, բարձր ափին: Սակայն չնայած այս առավելություններին, ոռուսաց բանակը պարտություն կրեց և նաև հանջեց դեպի Բախչիատրայ, Կորցնելով մինչև 6 հազար հոգի սպանված և վիրավոր:

Ալմա գետի ճակատամարտն առաջին խոշոր ընդհարումն է դաշնակիցների հետ, վորի մեջ արտահայտվեց նրանց բացահայտ առավելությունը սպառազինության և տակտիկայի մեջ ոռուսական հետամնաց բանակի հանդեպ: Խուսների սպառազինությունը կազմված եր տափակափող կայծքարի և հարվածիչ հրացաններից, նրանք 35 հազար զորքին ունեցին ընդամենը 2 հազար շտուցեր, մինչդեռ դաշնակիցները՝ 50—60 հազար զորքին՝ 30 հազար շտուցեր:

Ալմա գետի պարտությունը դաշնակիցների համար ազատ ճանապարհ բացեց գետի Սևաստոպոլ: Բայց նրանք դանդաղում եյին, ժամանակ եյին կորցնում անտեղի շրջանց կատարելով Ալմա գետից գետի Բախչիատրա, մեջ տալով Սևաստոպոլը, և ապա այստեղից մոտեցան քաղաքին հարավային կողմից՝ այն ավելի մատչելի դանելով զրոնի համար: Միայն հոկտեմբերի 3-ին նըրանք շրջապատեցին Սևաստոպոլը, իսկ կրակ բացին հոկտեմբերի 17-ին: Այսպիսով ոռուսները համարյա մի ամիս ունեցին քաղաքի ամբացման համար:

Սևաստոպոլի պաշտման սկզբին ուժերի հարաբերակցությունը հետեւյան եր, ոռուսաց դաշտային բանակն իշխան Մենշիկովի հրամանատարությամբ ուներ 30—35 հազար մարդ, ձեզված գետի Բախչիատրայ: Նրա զիրքերը դասավորված եյին սեփաստովոյան մեծ ծովախորշի հուսիսային կողմում և Սև գետի աջ կողմի բարձունքներում, վորտեղից բանակը մշտական կատուներ Սևաստոպոլում պաշտամարդների հետ: Քաղաքում կայտարուն աճեց ու հասավ աղջու ուժի՝ ոգնություն ստանալով 17 հազար նավաստի սեծովյան նավատորմիդից: Նավերի վրայից վերցրած հրետանիով ուժեղացվեց ամրոցային հրետանին: Սևծովյան նավատորմիդը լավ կազմեր տվեց ամրոցին հանձին՝ ծովակալներ կորնիլովի և Նախիմովի, վորոնք ճարտարապետ Տոմիկոնի հետ

միասին գլուխ բերեցին քաղաքի պաշտպանության կազմակերպումը: Նրանց ղեկավարությամբ մի ամսվա ընթացքում Սևաստոպոլի յերկու մասն ել՝ քաղաքային և նավային, Կարանտինի ծովախորշից մինչև հարավային ծովախորշի վերջը և մինչև Կեւլենքությունը, շրջապատված եյին հողային ամրություններով:

Դաշնակիցները Սևաստոպոլի տակ ունեցին 50—60 հազար ցամաքային զորք և ուժեղ նավատորմիդ:<sup>1</sup> Սակայն այս ուժերը քիչ եյին քաղաքը բոլոր կողմերից շրջապատելու համար: Հյուսիսային կողմը նրանք չեյին գրավել և պաշտպանությունը մշտապետ ոգնություն եյին ստանում մարդկանցով ու պաշտպանությունը մշտապետ բարձր շտուցեր:

Իրենց կայաններից կտրված լինելը և Մենշիկովի բանակի կողմից թիկունքին սպառնալը մեծ գժվարություններ եյին ստեղծում դաշնակիցների համար: Առաջին շրջանում ոռուսների հրետանին ավելի ուժեղ եր և ստիպեց դաշնակիցների մի շարք մարտկոցներին լուելու<sup>2</sup>: Հողային քանդված ամրությունները սուսներն արագորեն վերականգնում եյին:

Այսպիսով դաշնակիցների ուժերի գերակշռությունը պաշտպանության հանգեց շատ աննշան եր, նրանք հույս ունեցին շուտապետ ոժանդակություն ստանալ, վորը և աստիճանաբար սկսեց ստացվել:

Այս ժամանակ Մենշիկովը նույնպես սժանդակություն բարձրացրով և ուժերի զորոց գերակշռություն ունենալով, պատրաստվում եր հարվածելու դաշնակիցների թիկունքին և ստիպելու նրանց գաղարեցրել Սևաստոպոլի պաշտպանը: Սա միանգամյա ճիշտ ստրատեգիա յեր, բայց ոռուսաց հրամանատարությունը շատ վատ իրազործեց: Այսպիսի առաջին փորձը, վոր պատմության մեջ մտավ «Բախչիատրայ ճակատամարտ» անունով, կատարվեց 1854 թ. հոկտեմբերի 25-ին և ոռուսների համար անհաջողությամբ վերջացավ: 10 որ հետո, նոյեմբերի 5-ին, ոռուսները յերկրորդ փորձն են անում ազատելու Սևաստոպոլը, մտադրվելով հարվածել պաշտամարդների աջ թեկին, վորը կազմված եր անգլիական զորքերից: Այս խնդրի կատարման համար Մենշիկովը

<sup>1</sup> Գերակշռություն եյին շուրջնառվերն ու պատուականավերը, ի տարբերություն ոռուսաց նավատորմից, վոր համարյա ամբողջովին կազմված եր պաշտպանակերից:

<sup>2</sup> Ոռուսներն ունեցին 200—300 հրանոթ, իսկ դաշնակիցները՝ 126:

կենտրոնացրեց հակայական ուժեր, մոտ 40 հազար հետևակ՝ 16 հազար անգլիացիների դիմաց: Տեղի ունեցավ ինկերմանյան հակատամարտ, վորտեզ ոռւսական բանակն ու նրա հրամանատառությունը ցույց տվին, վոր իրենք կատարելապես ոնանկ են:

Ինկերմանյան ճակատամարտում ոռւսները կամպանիայի սկզբից ի վեր չտեսնված վնաս կրեցին, մի ճակատամարտում կորցնելով մոտ 12 հազ. հոգի սպանված: Այս ճակատամարտը սպամական և քաղաքական մեծ նշանակություն ունեցավ. նա բեկումային մոմենտ հանդիսացավ Դրիմի պատերազմի ամբողջ լնթացքի համար: Ինկերմանի մոտ պարտվելուց հետո ոռւսներն այլև այսպիսի լայն մասշտաբով փորձեր չարին ազատազրելու Սևաստոպոլը:

Ինկերմանի մոտ ոռւսների պարտվելու գլխավոր պատճառն այն է, «վոր պատերազմելու ոռւսական յեղանակը չդիմացավ յելլրոպական յեղանակի դեմ», — գրում եր Ենդելը<sup>1</sup>: «Ուռաց հետևակի համբավը խամրում է: Այն ցույց ե տալիս, վոր ինչ հաջողություններ եր վոր անի Ռուսաստանը, Արևմուտքն առաջադիմում ե, առնվազն, յերկու անգամ արագ»<sup>2</sup>:

Ինկերմանի ճակատամարտից հետո յերկու կողմերն ել ծանր դրության մեջ ելին: Ռուսների ակտիվությունն ուժեղացրեց գաշնակիցների զգուշությունը, իսկ վերահս ձմեռը դադարեցրեց պատերազմական լուրջ գործողությունները: Դաշնակիցներն ոժանդակ ուժեր ելին հասցնում, նրանց ուժերն աճում ելին: Ֆրանսիան Դրիմի սաղմարեմ հանեց 110 հազար զորք, Անգլիան՝ 50 հազ.: Ռուսաստանի դեմ պատերազմ և հայտարարում Մարգինիան և իր զորքերն ուղարկում Դրիմ: Ավատրիան վճռականապես թեքվում և Ռուսաստանի հակառակորդների կողմը, բայց և այնպես չի վճռում պատերազմ հայտարարելու:

Ռուսները գետի Դրիմ քաշեցին իրենց զինված ուժերի կեսը: Սևաստոպոլի պաշարումը ձգձվում եր:

Թվում ե, թե բոլոր առավելությունները ոռւսական կողմումն են, նրանք իրենց տերրիտորիայի վրա յեն, այն ժամանակն յերբ դաշնակիցները հակառակորդի տերրիտորիայումն են, արտասովոր պայմաններում և հենակայաններոց հեռու: Բայց յերկը տնտեսական հետամնացությունն ու ուղմական մերե-

✓ <sup>1</sup> Կ. Մարքս լել. ֆ. Ենգելս, Յերկը մող, Հ. հ., եջ 209

<sup>2</sup> Նույն տեղում, եջ 210:

նայի անպետքությունն այնքան մեծ են, վոր ոռւսաց բանակի գրությունն որեցոր վատթարանում եր. համաձարակներն ամայցնում են զորքի շարքերը, պակասում և բանակի ապահովման համար ամենահանդրաժեշտ բանը, չկա տաք հագուստ, ընդհարումներ են տեղի ունենում սննդի մատակարարման մեջ: Առանձնապես խիստ հարվածում ե յերկաթուղային տրանսպորտի բացակայությունը: Հետամնաց Ռուսաստան անզոր և համակրությունը Յելլրոպայի առաջավոր յերկրների հետեւց, և աստիճանաբար ուժերի գերակշռությունն անցնում և դաշնակիցների կողմը:

Այսպիսի ծանր պայմաններում և պաշտպանվում Սևաստոպոլի կայազորը, վոր հասցված եր մինչեւ 60 հազար հոգու: Դաշնակիցների գլխավոր հարվածներն սկզբում ուղղված են ոռւսական չորրորդ բաստիոնի (ամրոցի) դեմ: Այնուհետև նրանց ջանքերը փոխադրվում են Մալախովի գերեզմանաթմբի վրա, վորը հանդիսանում եր պաշտպանության բանալին, վորովհետև իշխում եր նավային կողմի բոլոր ամրությունների վրա: Ռուսները, հաշվի առնելով Մալախովի գերեզմանաթմբի նշանակությունը, ամրացրին նրա առջեր և կողքի № 2 բաստիոնի բարձունքները, կառուցցեցին Վոլինի և Սելինգինի ամրոցիկներն ու կամչատյան լյունետը: Հատուկ նշանակություն ունեցավ վերջին ամրությունը, վոր գտնվում եր նույնիսկ Մալախովի գերեզմանաթմբին իշխող բարձունքի վրա:

Մինչեւ 1855 թ. գարուն դաշնակիցները չեն համարձակվում գրոհով վերցնել Սևաստոպոլի ամրությունները. նրանք ինսամքով նախապատրաստվում են, իրենց խրամատներն աստիճանաբար մոտեցնելով ոռւսական ամրություններին և հրետանային կրակով խորակելով նրանց:

Հունիսի 7-ին ֆրանսիական չորս գիվիզիա գեներալ Բուսկեյի հրամանատարությամբ գրավում են կամչատյան լյունետն ու Վոլինի և Սելինգինի սեղուտները:

Սա ճգնաժամային մամենտն և Սևաստոպոլի պաշտպանության մեջ, այնուհետև... «գրությունն սկսում և դաւնալ հուսահատական»<sup>1</sup>:

<sup>1</sup> Իշխան Մենցիկովին փոխարինած իշխան Գորչակովի՝ Ալեքսանդր Խայսեր զրած նախակից: Եփկուայ Լ կայսր մեռավ, իսկ վորոշ տվյալներով, թունավորվեց 1855 թվի մարտի 2-ին:

Դաշնակիցները պատրաստվում են նոր գրոհի: Նրանց ուժերը մեկ և կես անգամ զերազանցում են Սևաստոպոլի կայազորին ու գաշտային բանակին միասին վերցրած և հասնում 170—200 հազ. հոգու: Նրանց արկերն առատ են՝ մի հրանոթին որպես 400—500 հատ, իսկ ուսւներին՝ 150 հատ: Գրոհի նախորդյակին հրետանային ուժքին ուժբակոծումով նրանք լուրջ վասակածք պատճառեցին ամրություններին, մինչդեռ ուսւները թույլ պատասխան կրակ ելին տալիս վասող չինելու պատճառով:

Բայց դաշնակիցները չկարողացան քողարկել գրոհի պատրաստությունը, և ուսւները գիշերը կարողացան ուղղել քանդված ամրությունները, բավականաչափ ուժեր քաշել գեպի նավային կողմը և պատրաստվել կոմի: Հունիսի 18-ի գրոհը նրանք հետմղեցին՝ հսկայական կորուստներ պատճառելով դաշնակիցներին:

Այսուամենայնիվ ուժերի գերակշռությունը մնում էր դաշնակիցների կողմը: Նրանք ել ավելի յեռանգուն գործունեյություն են ծավալում նախապատրաստվելու նոր գրոհի: Սևաստոպոլի շուրջը խրամատների շղթան անընդհատ նեղանում է, հունիսին նրանք ուսւական ամրություններից հեռու ելին 240 մետր, ոգոսատին՝ 110; Ամբողջ քաղաքում չկար մի կետ, վորչումբակոծվեր հրետանային կրակով, և չկար մի ամրոց, վորին չհասներ շտուցերի կրակը: Սևաստոպոլը վերածվեց մի յուրատեսակ մասղացի: Նրա մեջ բարձր հրամանատարությունն անընդհատ լցնում էր հագարակով մարդիկ, վորոնք դնում ելին համարյա գեպի անտարակուսելի մահ: Ռուսներն ամեն որ կորցնում են 500—700 մարդ սպանված:

Յերեք որվա ընթացքում՝ սեպտեմբերի 5-ին, 6-ին և 7-ին հրետանային անընդհատ կրակով քայքայվեցին համարյա բոլոր ամրությունները, ուսւական բանակում շարքից դուրս մնացին 7500 մարդ: Դաշնակիցներն իրենց խրամատները մոտեցրին ուսւների պաշտպանողական ամրություններից 40—50 քայլ հեռավորության վրա: Սեպտեմբերի 8-ի ցերեկվա ժամի 12-ին դաշնակիցներն ամրությունների վրա անակնկալ կերպով ընդհանուր գրոհ կատարեցին: Մալախովի գերեզմանաթումբը վերցրեց ֆրանսիական գեներալ Մակ-Մագնի գիվիդիան, մյուս կետերում գրոհը հետ մղվեց: Մյուս որը դաշնակիցները պատրաստվում են շարունակելու գրոհը, բայց ուսւներն արդեն թողել ելին Սևաստոպոլը, կամուրջով անցնելով Մեծ ծովախորշի հյուսիսային կող-

մը: Առաջուց նրանք պայթեցնում են և այրում պաշարեղենը, նավահանգստային կառուցումները և խորտակում նավատորմիզի մնացորդները:

Սևաստոպոլը վերցնելուց հետո, թեև պաշտոնապես զինադադար չկնքվեց, սակայն ուսպական գործողությունները դաշտաբեցին: Դաշնակիցները հասան իրենց նպատակին. նրանք մըտադիր չելին հարձակվելու յերկրի խորքը, իսկ սահմանի մյուս մասերում առասարակ վոչ մի լուրջ բան չձեռնարկեցին: 1854թ. ամառը նրանք վոչնչացրին Ալանդյան կղզիների ուսւական ամրությունները, 1855 թ. ամռանը քանդեցին Սվեստրոգը, իսկ աշնանը վերցրին կինըուռն ամրոցը<sup>1</sup>:

Մի քիչ ավելի յերկար ձգձգվեցին Կովկասյան ուսպամաքեմի պատերազմական գործողությունները, բայց Սևաստոպոլի անկումից հետո այստեղ ել բանը վերջանալու վրա յեր:

\* \*

✓ Կովկասյան ուսպամաքեմում պատերազմական առաջին գործողություններն սկսվեցին 1853 թ. նոյեմբերի 27—28-ին, յերբ թյուրքերը վերցրին սուրբ Նիկոլայի ամրոցը:

Արևելյան պատերազմի սկզբին սուսներն արգեն հենակայաններ ունեյին Կովկասում, նրանք ամուր հիմնվեցին Ուսեթիայում, ինգուշեթիայում և Կաբարդայում, անցկացրին ուսպամաքերական և ուղմատության ձնակարգները: Նրանց գաղութարարքաղաքանության կենտրոնն էր Թիֆլիսին: Բայց այս շրջաններից այն կողմ, թիգունքում, Կովկասյան լեռնաշղթայի հյուսիսարևելյան մասում՝ Զերկեսատանում, հարավարևելյան մասում՝ Զեչնյայում և Դաշտամում տարածվում ե լեռնային ժողովուրդների զինված ազատագրական պայքարի լայն ալիքը:

Ռուսներին թշնամի այս շրջանները նրանց հիմնական հենակայանից բաժանվում ելին ընդարձակ լեռնային, զժվարանցանելի վայրով, այս պատճառով լեռնականները՝ կտրված Սևածովի ափերից և բավականաչափ ոգնություն չստանալով թյուրքերից, ուղմական տեսակետից լուրջ սպաննալիք չեցին կարող ներկայացնել սուսական գործող բանակին:

Ռուսաց զորքը քիչ եր Կովկասում, բայց իր մարտական հատկություններով նա ավելի լավ եր, քան թե դանուբյան և թե

<sup>1</sup> Աչակովի գիմաց, Դնեպրո-բուզի լիմանի մուտքի մոտ:



նույնիսկ Ղրիմի բանակից և զգալիորեն ավելի բարձր, բան Անդըրկովկասի թյուրքական բանակը:

Պատերազմական գործողությունների սկզբին թյուրքերը փորձում են նախաձեռնությունն իրենց ձեռքը վերցնել և հարձակողական գործողություններ են զարգացնում, բայց ամրող ժամանակ պարտություններ են կրում: Այսպես, նրանք 1853 թ. նոյեմբերի 26-ին ջախջախվեցին Ալիալիշայի մոտ և հարկադրվեցին նահանջել: 1853 թ. դեկտեմբերի 1-ին Բաշ—Կապիքլարի մոտ ուսւաները նորից պարտության են մատնում թյուրքերին և նախաձեռնությունն իրենց ձեռքը վերցնում: 1854 թ. հունիսի 27-ին Քյուրուք—Դարի մոտ նրանք ջարդում են թյուրքական գլխավոր բանակը, վորը թաքնվում և Ղարսի ամրությունների հետեւ:

1855 թ. գարնանը ստեղծվում է ուռասկան ուժերի գերակռություն—Նրանք զարգացնում են հարձակումը և թյուրքերին փակում Ղարսի ամրոցում: Կորիվը մանում և իր վճռական փուլի մեջ, քանի վոր Ղարսը երգումի բանալին է, իսկ երգը ըստմը՝ Կոնստանդնուպոլսի բանալին և Անտառլիայի սաղմագիտական ու առեւրական ճանապարհների կենարոնակետը:

1855 թ. սեպտեմբերի 29-ին ոսւմները փորձում են գրուով վերցնել Ղարսը, բայց համոզվելով, վոր այս խնդիրը նրանք ի վիճակի չեն կատարելու, անցնում են պաշարման: 1855 թ. նոյեմբերի 28-ին Ղարսի ուժասպառ և սովոր մահացող կայտարություն հանձնեց ամրոցը:

Կովկասյան սաղմարեմը յերկրորդական գեր եր խաղում, այս պատճառով ոսւմների այնտեղ տարած հաղթանակները վրձնական նշանակություն չունեցան և չափելացրին ոռւսաց գենքի համբավը, այն գենքի, վորը Դանուբի ու Ղրիմի կամպանիաներում ցույց տվեց իր սնանկությունը: Այս հաղթանակները գրշեավորապես բացատրվում են նրանով, վոր այստեղ ոսւմները գործ ունեցին միայն թյուրքական զորքերի հետ, ընդվորում վոչ թե լավագույն, այլ ամենավատ զորամասերի հետ, վորոնց կեսը կազմված եր անկանոն զորքերից: Դաշնակիցները Կովկասյան սաղմարեմը համարելով յերկրորդական, իրենց զորքերը չուղարկեցին այնտեղ՝ սահմանափակվելով հրահանգիչ սպաներ ուղարկելով:

Անդըրկովկասում ոսւմների տարած հաղթանակները պատերազմի ընդհանուր արդյունքները չփոխեցին: Այս պատերազմից

Ուռասստանը պարտված դուրս յեկավ, քանի վոր կովի կենաւրոնը Ղրիմն եր, և վոչ թե Անդըրկովկասը:

\* \*

✓ Սևաստոպոլի անկումից հետո վոչ ոսւմների, վոչ ել գաշնակիցների համար իմաստ չուներ շարունակել պատերազմը: Առաջինները լուրջ պարտություն կրեցին և չափազանց շատ ուժեր ու միջոցներ ծախսեցին, վորպեսզի համարձակվեցին պատերազմը շարունակելու իրենց ավելի ուժեղ հակառակորդների հետ: Իսկ գաշնակիցների համար «ստրատեգիական անմտությունն կլիներ Ղրիմից գնալ Ուռասստանի խորքը» (ԵնԳԵԼՍ):

1856 թ. փետրվարի 25-ին բացվում է Փարիզի խաղաղարար կոնգրեսը, իսկ մարտի 30-ին ստորագրվում է Փարիզյան խաղաղության դաշնակիրը: Այս դաշնագրով Ուռասստանը կորցրեց Սևաստոպոլի պահելու իրավունքը և փաստուրին ընդունեց վոչ միայն Դարվանելի, այլև Սև ծովի չեղոքացումը: Սա առանձնապես վիճելի կետ էր, վորի գեմ համառորեն առարկում եր Ուռասստանը: Նա ստիպված յեղավ հրաժարվելու Արևելքում քրիստոնյաներին խնամարկելու բացառիկ իրավունքից և դանուբյան իշխանությունների պրոտեկտորը լինելուց, վորոնց համար ապահովվում եր սահմանադրական կառուցվածք:

Ուռասստանը պարտավորվեց «Հարգելու» թյուրքիայի անկախությունն ու ամրողությունը: Դանուբի վրա հաստատվեց ազատ նավագնացություն: Այս բանն ապահովելու համար Դանուբի գետաբերանն իրեն հարակից տերրիտորիայով խլվում են Ուռասստանից և հանձնվում մոլլավական իշխանությանը:

Ուռասստանի գրաված թյուրքական ամրոցներն ու տերրիտորիաներն առանց հաստոցման համարվում են փոխանակված գաշնակիցների գրաված Սևաստոպոլի և նրան կից տերրիտորիայի հետ:

Փարիզյան խաղաղության պայմաններից մենք տեսնում ենք, վոր գաշնակիցները մինչև վերջ պահպանեցին իրենց գիծը — նրանք չփոչնչացրին Ուռասստանի հղորությունը, բայց սասարիկ խախտեցին այն: Արևելյան պատերազմի հետևանքով Ուռասստանը կորցրեց անպարտության փառապսակը, «միջազգային ժամանակմը» լուրջ հարված ստացավ:

Ճուղասատիրական Ռուսաստանի փառածությունն ու անդուրությունը, Նրա տնտեսական հետամնացությունն ու ներքին քաղաքական թուլությունը հանդիսացան Ղրիմի պատերազմի պարագության պատճառը:

Ղրիմի պատերազմը հանդիսանում եր արտադրության հետամնաց յեղանակներ ունեցող ազգի անհուսավի կոփի ընդդեմ Նրա նորագույն ձևերն ունեցող ազգությունների:

Հին Ռուսաստանին «... խփում ելին անգլո-ֆրանսիական կապիտալիստները: Խփում ելին ճապոնական բարոնները: Բոլորը խփում ելին հետամնացության համար: Ռազմական հետամնացության համար, կուլտուրական հետամնացության համար, պետական հետամնացության համար, արդյունաբերական հետամնացության համար: Խփում ելին Նրա համար, վոր այս ձեռնառու յեր և անպատիթ եր անցնում»<sup>1</sup>:

Ռուսաստանի տեխնիկա-տնտեսական հետամնացության լավագույն ցուցանիշը ծանր արդյունաբերության զարգացումն ե, վորի հիմքն ե հանդիսանում թուջի արդյունահանումը: Այսպես, XIX դարի յերկրորդ քառորդում թուջի միջին տարեկան ձուլումը պատկերանում ե հետեւյալ կերպ. 1826—1830 թթ.—10,2 միլիոն տուժ, իսկ 1856—1860 թթ.—16,6 միլիոն տուժ, կամ 30 տարում 1,6 անգամ աճում: Անգլիայում 1826 թ. ձուլված ե 37 միլիոն տուժ, իսկ 1859 թ.—234 միլիոն տուժ, կամ 6,3 անգամ աճում: Ղրիմի պատերազմի նախորյակին Անգլիան թուջի ձուլումով Ռուսաստանին գերազանցում եր համարյա 15 անգամ, ֆրանսիան՝ 3 անգամ:

Ղրիմի պատերազմից առաջ և բուն պատերազմի ժամանակ Ռուսաստանի քաղաքական գրությունն անկայուն եր գյուղացիական շարժման բուռն աճման հետեւանքով: Այսպես, ուժ տարում (1826—1834 թթ.) յեղել ե 148 գյուղացիական խոռոչություն, մի տասնամյակում (1835—1844 թթ.) 216 խոռոչություն և Ղրիմի պատերազմին նախորդող տասնամյակում տեղի յին ունեցել ամենաշատ քանակությամբ խոռոչություններ՝ 348, կամ 28 տարում տեղի ունեցած բոլոր խոռոչությունների 48,8%<sup>0</sup> ը:

<sup>1</sup> Աւալին. «Հենինիդի հարցերը», եջ 445, 1934 թ., Կուսհրատ, Մոսկվա:

Ղրիմի պատերազմի սկզբից աճում են գյուղացիական շարժումները, և յերւյթների համար յեղած առիթների ամբողջ բազմազանությամբ հանդերձ շարժման բնորոշ մոմենտը հանդիսանում է նրա մասսայականությունը, արագ տարածումը մեծ տեղաբարորդականների վրա և այն, վոր համարյա բոլոր խոռոչությունները կապված ելին գյուղացիների «ազատության» ձգտման հետ:

1854—1855 թթ. լայն շարժում և ծավալվում այն լուրի կապակցությամբ, թե ծովային աշխարհազորի ծառայության համար ազատություն են տալիս: Գյուղացիք թողնում են աշխատանքը և ինքնազգությունը հեռանում գյուղերից աշխարհազորական գրվելու համար: Շարժումն արագորեն մասսայական բնույթ ե ստանում և ընդգրկում 10 նահանգ. Թյաղանի, Տամբովի, Վլադիմիրի, Պենզայի, Նովոչերովի և այլն: Գյուղացիների դեմ ուղղական ուժեր առաջ քաշվեցին, և շարժումը ճնշվեց:

1855 թ. գարնանն ու ամառը յոթ նահանգում տեղի ունեցավ պետական զորակոչ: Կրկին լուրեր են պտտում «ազատության» մասին, վորը կտան աշխարհազորում ծառայելու համար: Գյուղացիների բազմությունները ձգտում են գրանցվելու աշխարհազորում իրեն կամավորներ: Կառավարությունը վախեցած «պատրիոտիզմի» այսպիսի արտահայտությունից, սվիններով կանգնեցնում և գյուղացիներին: Առանձին լայնությամբ ու խստությամբ արտահայտվեց շարժումը կիկի նահանգում, վորտեղ ճնշման համար առաջ ելին քաշված լուրջ զինվորական ուժեր՝ 16 եսկադրոն, 2 վաշտ սակրավորներ, մի գումարտակ և մի զիվիզիոն: Գյուղացիք գիմազրություն ելին ցույց տալիս զորքերին, իսկ տեղ-տեղի բերնք ելին հարձակվում զորախմբերի վրա:

1856 թ. սկսվում ե գյուղացիների մասսայական տեղափոխություն գեղի Ղրիմ: Սրա համար առիթ ծառայեցին այն լուրերը, թե պատերազմից քայլքայված վայրեր գաղթողներին տրվում ե նպաստ, պետական աշխատանք, իսկ կալվածատիրական գյուղացիներին՝ ազատություն: Այս լուրերի ազգեցության տակ հարավային Ռուսաստանի գյուղացիները 1856 թ. գարնան գաշտային աշխատանքների ամենայեռուն ժամանակ շարժվեցին գեղի Պերեկոտ: Շարժումն սկսեցին անհատներ, իսկ հետո նաընդգրկեց ամբողջ գյուղեր: Գյուղացիք շարժվեցին գեղի Ռուսաստանի հարավի իրենց գույքով ու ընտանիքով, մեծ բազմություններով, վորոնք յերբեմն հասնում ելին 3 հազար հոգու: Թե վորքան լայն եր այս շարժումը, ցույց են տալիս հետեւյալ տըլ-

յաները, յերկու գավառից՝ Յեկատերինոսլավի և Վերինեղնեպշ-  
րոպետրովսկի—հունիսին հեռացան 9 հազար գյուղացի: Գյուղա-  
ցիներին կանգնեցնելու փորձերը հանգան մի քանի արյունահեղ  
ընդհարումների:

Պատերազմի ժամանակ հետաքրքրական անցքել են ծա-  
վալում Ղրիմում, վորտեղ գասակարգային և ազգային ճնշման  
յուրահատուկ միահյուսումն իր կնիքն և դրել շարժման վրա:  
Եարժումն սկսվում է մուսուլման հոգեորականության և տեղա-  
կան բնակչության ունեոր տարրերի ազդեցությամբ<sup>1</sup>, իբրև ազ-  
գային շարժում ընդգեմ ոռւսների, բայց շատ շուտով գասա-  
կարգային բնույթ և ստանում: Սա պայմանավորվում է նրա-  
նով, վոր Ղրիմի կալվածատերերի մասսան ոռւսական ազնվակա-  
նական ավագանին եր, վորին պատկանում եր ամբողջ հոգի  
կեսից ավելին: Հենց նրանց դեմ եր գլխավորապես ուղղված  
շարժումը:

Ղրիմի թաթարների մեջ հուզմունքներն սկսեցին գաշնա-  
կիցների զորքն ափ հանելուց շատ առաջ: 1854 թ. հունվարի  
27-ին Մենշիկովի՝ ցարին տված զեկուցագրի համաձայն գաշնա-  
կից նավատորմի Սև ծովում հանդես գալը մեծ տպավորություն  
գործեց թաթարների վրա: Բնակիչների մեջ խոռվություններ  
առաջանալու դեմ Մենշիկովը միջոցներ և ձեռք առնում: 1854  
թ. հունիսի 1-ին կազմների Դոսյան գնդի Յեկատերինա գալուց  
հետո նա այդ գունդը կորդոնաձև գասավորեց ծովագին, իսկ  
բնակչությանը հսկելու և նրան զորքի մեծաքանակ լինելու մեջ  
համոզելու համար կազմվեց յերկու շարժական զորասյուն, յու-  
րաքանչյուրը յերկու վաշտից, վորոնք ուղամական զբոսանքի  
եյն ուղարկում Ղրիմի հարավային ափերը:

Դաշնակիցների ափ իջնելուց հետո շարժումն աճում և  
ակտիվանում ե: Ղրիմի համարյա կեսը ընդգրկված եր խոռվու-  
թյուններով: Մի շարք վայրերում ապստամբները տակնուվրա յեն  
անում կալվածատիրական ագարակները, հաշվետես են կատա-  
րում կալվածատերերի ու պետական աստիճանավորների հետ,  
զինված ընդհարումներ են տեղի ունենում կազմների հետ և  
հարձակումներ՝ սահմանապահ կորդոնների (զորագիտների)  
վրա: Առանձին վայրերում հրամանատրությունն ստիպված ե-

լինում հետ վերցնել սահմանապահներին, յերկուուղ կրելով, վոր  
ապստամբները նրանց կնետեն ծովը:

Կալվածատերերը լրջորեն վախեցած են և փրկվում են փախչե-  
լով քաղաքները: Իշխանության ներկայացուցիչները խումապի  
մեջ են: Տավրիկյան քաղաքացիական նահանգապետ գեներալ-լեյ-  
տենանտ Պետելլը գատարկում է Սիմֆերոպոլը:

Այսպիսով, յեթե Ղրիմում, Աևաստոպոլի պաշարման ժա-  
մանակ գաշնակիցների թիկունքին սպառնում եր Մեշիկովի բա-  
նակը, ապա ոռւսների թիկունքն ել անվանգ չեր գյուղացինե-  
րի, վոչ միայն թաթար, այլև ոռւս գյուղացիների, մասսայական  
յելույթների հետևանքով:

Առանձնապես Յեկատերինի գավառի թաթարներն ոգնե-  
ցին գաշնակիցներին՝ կատարելով ուղեցուցիչների, հետախույզ-  
ների և գետերի ծառայությունները: Յեկատերինայում մոտ 800  
հոգի կամավոր մտան միլիցայի մեջ: Իսկ ոռւսների գրաված տե-  
րիտորիայում խոռվությունները հասան մինչև Պերեկոպ: Թա-  
թարները հաճախ 200—300 հոգուց խմբեր են կաղմում և սպառ-  
նում զորքերի տեղաշարժերին: Այս հանգամանքն ստիպեց  
Մեշիկովին հրաման արձակելու, վոր յերթային շարժման ժամա-  
նակ առանձին զգուշություն պահպանեն, «զորպեսզի անակնկալ  
հարձակման չենթարկվեն ինչպես հակառակորդի, այնպես ել  
բնակիչների կողմից»:

Յերկրի քաղաքական անկայունությունը, գյուղացիական  
մասսայական խոռվություններն ինչպես խոր թիկունքում, այնպես  
ել անմիջականորեն պատերազմական զորդողությունների շրջա-  
նում քայլքայում եյն զորքի քաղաքական և բարոյական ամ-  
րությունը:

Ոռւսաստանի արտագրության հետամնաց ֆեոդալական-ձոր-  
տատիրական յեղանակը չփամացավ արտագրության կապիտալիս-  
տական յեղանակ ունեցող առաջավոր ազգերի գեմ կովելիս: Այս  
պարտության մեջ վճռական գեր խաղաց ինքը բանակը:

Իր վրա անդրադարձնելով կալվածատիրական-ձորտատիրա-  
կան փտած ու անզոր հասարակակարգի բոլոր գծերը, նա կրեց  
պարտություն պարտության հետեւյ յերկու-յերեք անգամ ավել-  
իլ շատ մարդկային կորուս ունենալով, քան գաշնակիցները:  
Ղրիմի պատերազմում ոռւսների կորուստները հասնում են 676  
հազար 110 հոգու՝ սպանված և մեռած:

<sup>1</sup> Այստեղ աշխատանք եր կատարում գաշնակիցների գործակալությունը

Ղրիմի պատերազմում պարտվելը հսկայական նշանակություն ունեցավ Ռուսաստանի հետագա զարգացման համար: «Ղրիմի պատերազմը, — գրում է Անդրեյ, — ցույց տվեց ճորտատիրական Ռուսաստանի փոտածությունն ու անզորությունը»:<sup>1</sup> Ղրիմի պատերազմում ճորտատեր-կալվածատերերը ցույց տվին իրենց անընդունակությունը պաշտպանելու իրենց հայրենիքը, վորը հիմնված եր հետամաց եկոնոմիկայի և ճորտ գյուղացիության անաղատ աշխատանքի վրա:

Պատերազմի արդյունքը յեղավ գյուղացիական շարժման բուռն աճումը: Այսպես, գյուղացիական խոռոչությունների թիվը 1855-ից մինչև 1861 թ., այսինքն Ղրիմի պատերազմից հետո յեղող առաջին վեց տարում, կազմում է գյուղացիական սեփորմին նախորդող 35 տարվա ընթացքում տեղի ունեցած խոռոչությունների ընդհանուր թվի 40%՝ Գյուղացիական մասսայական խոռոչություններով բռնված ելին Ռուսաստանի համարյա բոլոր շըրջանները:

Ղրիմի պատերազմի շրջանում և նրանից հետո գյուղացիական շարժման աճումը խիստ վախեցրեց կարվածատեր-ճորտատերերին, և նույնիսկ ճորտատիրական կարգերի ամենամոլի կողմանակիցները հակլում են դեպի ճորտատիրական իրավունքից ազատվելու կողմը:

Ա. Ի. Կողելյովը նշում է, վոր ժողովրդական ապստամբության սարսափի ազգեցության տակ 1854—1855 թ. թ. մոլի ճորտատերերը պատրաստ եյին գյուղացիների ազատագրության ամենանձեռնուու պայմաններին:<sup>2</sup> Վաստիկանական գեղարտամենուր 1858 թ. հաշվետվության մեջ գրում ե, վոր 1855—1856 թ.թ. շարժումն, իրեւ ժողովրդի վրդովված տրամադրության հատկանիշ, ստիպում է յերկյուղ կրել ճորտատերերի անզորության համար<sup>3</sup>:

«Բայց շտապեցեք, — գրում է Գերցենը, դիմելով աղնվականությանը, — տաք ժամանակն ե, վոչ մի ժամ կորցնել չի կարելի»:

<sup>1</sup> Անդրեյ, XV հ., եջ 143:

<sup>2</sup> Ե. Ի. Եգանովիլի. «Կարվածատիրական գյուղացիներն ազատագրության նախորդյակին», եջ 313—314.

<sup>3</sup> Նույն տեղում, եջ 351:

«Յեթե դուք վոչինչ չկարողանաք անել նրանք այնուամենայնիվ աղատ կլինեն՝ ցարական վողորմածությամբ, կամ պուգաչովչինայի վողորմածությամբ»:<sup>1</sup>

Ղրիմի պատերազմի պարտության հետ կապված իրադարձությունների ազգեցությամբ իր ձայնն ե բարձրացնում ծնվող բուրժուազիան: Այս ձայնի արտահայտիչը հանգիսացավ մասնավորապես պատմաբան Պոգողինը: Իր նամակներում նա ասում ե, թե Արևմուտքում Ռուսաստանի «ժամանակի վոգու» (հեղափոխության: — Ն. Յ.) գեմ պայքարելու քաղաքականությունը սխալ եր, նրա գեմ պայքարելն անոգուտ ե և անկարելի: հարկավոր ե կամովին հարմարվել այս «ժամանակի վոգուն»:<sup>2</sup>

Պոգողինի նամակները—այս նոր, բուրժուազիան իդեոլոգիայի արտահայտությունը, վոր գալիս եր փոխարինելու հին, ազնվականական-ճորտատիրական իդեոլոգիային—արտացոլում են XIX դարի առաջին կեսի ճորտատիրական Ռուսաստանի տնտեսական հեղաշրջումը:

Ծեծկված ու հետամիաց ճորտ գյուղացիությունը՝ Ղրիմի պատերազմի արյունահեղ դասերից հետո չեր ուզում վերադառնալ նախկին պասսիվ և անզիտակից հնազանդմանը:

«... մենք դաշնակից ստացանք հանձին ոռւս ճորտի: Այն պայքարը, վոր այժմ բորբոքված ե Ռուսաստանում գերիշխող դասակարգի և գյուղական բնակչության հարստահարված դասակարգի միջև, արդեն այժմ խախտում ե ոռւսական արտաքին քաղաքականության ամբողջ սիստեմի հիմքերը: Այս սիստեմը հնարագոր եր միայն մինչև այն ժամանակ, քանի գեռ Ռուսաստանում ներքին քաղաքական զարգացում չկար: Բայց այս ժամանակն անցավ: Կառավարության և ազնվականության միացյալ ջանքերով ստեղծված գյուղատնտեսական և արդյունարերական զարգացումը հասել ե այն աստիճանին, վորի ժամանակ գոյություն ունեցող սոցիալական հարաբերություններն այլև չեն կարող շարունակվել: Նրանց վերացումը մի կողմից անհրաժեշտ ե, իսկ մյուս կողմից անկարելի՝ առանց բռնի փոփոխության»:<sup>3</sup>

Այսպես եր գրում ենցիկլոպեդիան գյուղացիական ոեփորմից մի տարի առաջ, ցույց տալով հազվագյուտ դիտողունակություն և

<sup>1</sup> Նույն տեղում, եջ 351—352:

<sup>2</sup> Մ. Ե. Պոկրովսկի. «Ցարական Ռուսաստանի դիվանագիտությունն ու պատերազմները XIX դարում», եջ 175—177:

<sup>3</sup> Կ. Մարքս յել թ. Ենգելս. Յերկերի ժողով, XII հ., I մ., եջ 246:

Ռուսաստանի գրության խոր իմացություն։ Ճորտ գյուղացիների դասակարգային պայքարի սրումը կալվածատերերի հետ խախառում և կալվածատիրական-ճորտատիրական քաղաքականության ամրող սիստեմը, ասում ե Ենգելսը։ Սակայն այս սիստեմը հնարավոր եր միայն մինչև այն ժամանակ, քանի զեռ Ռուսաստանում չեր նկատվում ներքին զարգացման վորեւ պլոցես։ Բայց պատմական զարգացման ընթացքն ասպարեզ բերեց նոր ուժ՝ ռուսաստանյան հեղափոխությունը։<sup>1</sup>

Ռուսաստանի ներքին զարգացման այս պլոցեսները տեսնում ենին նաև գերիշխող կալվածատիրական-ճորտատիրական դասակարգի ներկայացնեցիչները։ Դրիմի պատերազմը բացեց նրանց աչքերը Ռուսաստանի ներքին կացության վրա, իսկ բուռն կերպով աճող գյուղացիական շարժումն ստիպում եր շատպել յեզրակացություններ անելու։ «Գյուղացիական բունտերը», աճելով ազատագրության նախորդող յուրաքանչյուր տասնամյակում, ստիպեցին առաջին կալվածատեր Ալեքսանդր Ռուսականը, վոր ավելի լազ և ազատել վերեից, քան թե սպասել, մինչև վոր կտագալեն ներքեից։<sup>1</sup>

(„Борьба Классов“, № 3, 1936, март.)



<sup>1</sup> Լեթին. XVI հ., էջ 143.

Գիւնչե 80 ԿՈՊ.

Խելքի

Յ



ՀՀ Ազգային գրադարան



NL0403511

